


կանանայ՝ իբր ուսուցիչ իր մեկնումովը Եղովկա ուր «Անձնուէր Ընկ.եան» մասնաճիւղ մը կը հաստատէ, նպատակ ունենալով կիրակի օրերը մայրենի լեզուի ձրի ուսուցում՝ բըքբախտներու : Մտաւոր յառաջդիմութեան այս եռանդին հաշտ աջօք ընն ուզեր նախը տեղացի մենծ-աղաներ որոնցմէ Յ. Սուքիասեան ջգարանիւր նոյն ընկերութիւնը կառավարութեան մատնանշելու իրեն խռովարար խմբակցութիւն մը : Պարագլուխ ուսուցիչը տարապարտուց կը բանտարկուի, և երբ առժամանակեայ արձակում մը կը շնորհուի իրեն՝ առիթէն օգտուելով կ'անցնի Սվազ, գրեթէ արքայական վիճակի մեջ, Պատրիարքարանի կողմէ իբր քննիչ Փոքր Հայք դրկուած Նաճատեան Փիլիպպոս և Սրապեան Կիւրեղ վարժապետներու պաշտպանութեան տակ, առաջնորդ Պետրոս Վ. Թանմիզճեանի միջոցաւ կուսակալին բողոքելու համար Եղովկայ հայ ժողովուրդին վրայ բռնացող աղաներու կամայականութեանց դեմ : Դատը բարձի բողի կ'ընեն և տարաբախտ վտարանդին 8 ամիս ապարդիւն բախտուելէ վերջ կը դառնայ Պոլիս ուր, 1874-5, կը վարէ **Ասիա** բերքին խմբագրութիւնը : 1875 ին է որ կը մեկնի Վան, դարձեալ կրթ. առաքելութեան պաշտօնով, Վասպուրական աշխարհի Հայութեան մատուցանելով քանակազին ծառայութիւններ որոնք Տաճկաստան իր բնակիչն անկարելի արքածուցած են այլ եւս : — 1885 ին կ'անցնի ՄԱՐՍԻԷ, ուր իր սեփական տպարանը հիմնելով կ'սկսի հրատարակել **Արմէնիա** լրագիրը՝ (15 տարի անընդհատ հրատարակուող իբր եռօրեայ) որ այս տարի բեւակոխեց Իէ. տարին և որ առջի մեկ օրէն նուիրուեցաւ Հայոց դատին : Թերթը տպագրուած է միշտ Մարիուս Շիքրիի մասնավոր : Ի սկզբան իր հասցին էր Armény փողոց, թիւ 2. և երբ Փորրուզայեան կ'աշոյղի բնասնիքը Վանէն Մարսէլ փոխադրել՝ իր տպարանական կազմաձեւովը կը փոխադրուի Vacon փողոց թիւ 50. ապա Allées de Meilhan, թիւ 44, նաև Glandevès և Beaumont փողոցները, նուակ ուրեմն Place Alexandre Labadié, թիւ 17 : — Ա. անգամ տառերը Պոլսէն՝ Տամատեանի ձուլարանը նայրայրած է իրեն. իսկ երբ Թուրքիոյ նետ իր յարաբերութիւնները կը խզուին՝ Վեներակէն : Գրաշարի մասին միշտ նեղութիւն քաշած է : Նախ Պոլսէն նոն կ'երբայ Վանցի Եղիազար Տապալեանը, լետոյ յաջորդարար Ռուսանայ մը, Պիւքիճեան Յակոբ Պոլսեցին և Մ. Շիքրիի գրաշարներէն Լուի Լայուաք անուն Ֆրանսացին որուն հայերէն տրվելուցամ էր և որ 4 տարի հայերէնի գրաշարութիւն բրաւ անոր մօտ : Փորրուզայեանի վերջընթեր գրաշարը եղած է Նշան Սիրունեան, իսկ ներկայիս մեջ՝ իր : աղջիկները, Օրք. ՇՈՒՇԱՆ և ԱՅՅԱՆԱՅԵՆ, — պարագայ մը որ հայ տպարանական աշխարհի 40 յամնայ գործունէութեան մեջ աննախընթաց նորութիւն մը կը կազմէ : Իրենք գրաշար-մեքենայ (linotypic) ալ վարել գիտեն և անդրանիկը 3 տարիէ նաեւ տողաշարն է La Sémaphore de Marseille օրաթերքին : — Այս գործիքը որ 13270 էջին վրայ գետեղուած գրամեքենային պէս ստեղծաշար ունի, իր մեջ պարունակող հնցով են. կը ձուլէ ու կը շարէ ամբողջական տողեր՝ ստեղծաշարին վրայ դաշնակահարութեան պէս ուստոստոյ մասներու ճնշման տակ : Երբ տողը լեցուի, ձուլուած նիւթէն ցայտք մը մայր տառերու ամբողջութեամբ կազմուած կաղապարին մեջ կը նետուի, և ապապէս կը յօրինէ միաձույլ տող մը. ապա մայր տառերը կ'երբան իրենց



ԳՐԱՇԱՐ - ՄԵՔԵՆԱՅ

տողերը : Օտարագզիներ իրենց օրաթերքերուն համար վերջերս Պոլիս եւս բերած են նոյն մեքենայէն :
 ** Բաց ի **Արմէնիա** : **Փորրուզայեանի հրատարակութիւն** եղած են. — Հայ դիւցազնուի մը (այս տարի Բ. տիպ), Հայ գիւղացի, Մաղմուս Բարպէի, Ագատուրիւն Պուլղարիոյ և կենսագր. Պուլղար տպատարապետաց (1888), Հայաստանի բշուռները (1889), Ժողովրդ. ընթերցարան, Լինչի օրէնքը Տաճկահայաստանում, Թիւրքիաի հայերն և իրենց դրացիները, Արմենիայի յուշարար (1890), Վրէմ, Թոմաս Բոցարիս, Նմոյշներ Մ. Փորրու-